ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

26.07. 2019թ.
Արձանագրություն թիվ 13

1. 2019-2020 թթ. բակալավրիատի նոր ուսումնական պլանների (4 տարի տևողությամբ՝ ցերեկային ուսուցման համակարգում և 4 տարի 8 ամիս տևողությամբ՝ հեռակա ուսուցման համակարգում) հաստատման հարցի վերաբերյալ.

Հաստատել 2019-2020 թթ. բակալավրիատի նոր ուսումնական պլանները (4 տարի տևողությամբ՝ ցերեկային ուսուցման համակարգում և 4 տարի 8 ամիս տևողությամբ՝ հեռակա ուսուցման համակարգում):

2. ՀԱԱՀ ռազմավարական պլանի վերաբերյալ.

Հանձնարարել պրոռեկտորներին և բոլոր ստորաբաժա¬նումների ղեկավարներին սեղմ ժամկետում ծանոթանալ ՀԱԱՀ ռազմավարական նոր պլանին և ներկայացնել առաջարկություններ:

3. Համալսարանում ուսման վարձավճարների պարտքերի վերաբերյալ.

Հանձնարարել դեկաններին, մասնաճյուղերի և քոլեջների տնօրեններին ուսանողների շրջանում իրականացնել բացատրական աշխատանքներ և հետևողական լինել ուսման վարձավճարների հավաքագրման հարցում:

4. Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտության 5-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Հայկ Արամի Մկրտչյանի չորրորդ կուրսի վարձավճարի փոխհատուցման վերաբերյալ.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագի-տության 5-րդ կուրսի վճարովի համակարգի բարձր առաջադի-մությամբ (ՄՈԳ՝ 17,73) ուսանող Հայկ Արամի Մկրտչյանի՝ չորրորդ կուրսի վարձավճարը փոխհատուցել 100 %-ով՝ համալսա¬րանի միջոցների հաշվին:

5. Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության վերաբերյալ.

5.1. Հանձնարարել դեկաններին ամբիոնների վարիչների հետ միասին մեկ շաբաթվա ընթացքում կատարել պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության վերահաշվարկ և կատարված արդյունքները ներկայացնել ուսումնական գործընթացի կառավարման վարչություն:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ